



6. ՄԱՐԴԻՍ ԾԱԿԱՏԻՆ ԻՆՁ ԳՐԱԾ Է՝ ԷՆԵՆՑ ԷՆ ԿԸԼՆԻ

Մի թաքավոր ա ընում, սա ուրիշ թաքավորի վրա կռիվ ա գնում. հրամայում է իր նոքարներին, որ կռվի համար պաշար հաղրեն: Նրա նոքարները հայտնում են՝ էնքան շատ է ընում պաշարը, որ իննը հարյուր ուղտ չի կարում տանի: Նոքարները գալիս են թաքավորին ասում, որ իննը հարյուր ուղտը հերիք չէ՝ մի հարյուր ուղտ էլ պիտի առնվի. նա ասում է, որ առնեն: Երբ ամեն բան պատրաստ է լինում, նա իր զորքով կռիվ է գնում, բայց կռվի մեջ հաղթվում է. իրա սաղ զորքը ջարդվում է, իսկ ինքը անջախ սաղ է մնում ու սրան դերի են տանում: Սրա գերի տանողը էն հաղթող թաքավորի ձիապանն ա ընում: Սա թաքավորին տանում ա, ոտները բխով է դնում ու գոմի մեջ փակում, մի փարխաջի նման պղինձ էլ կրակի վրա է դնում, մեջը կերակուր էփում, որ համ ինքը ուտի, համ իր եսրին տա:

Ձիապանը մի ըոպե գոմից դուրս է գնում թե չէ, դրսից մի շուն ներս է մտնում, դունչը կոխում է պղնձի մեջ, որ միսը ուտի. փարխաջի ունկը նրա ճտովն է ընկնում ու նա վերցնում է պղինձը կրակի վրայից ու հա՛յ դե հա՛յ, գոնե դուռ: Ձիապանը հետ է գալիս, տեսնում է կրակի վրա պղինձ չկա, զարմանում է, սկսում է քարկանալ իր եսրի վրա:

Նա ասում է.— Մի քանի օր առաջ էնքան ուտելու բան ունեի, որ իննը հարյուր ուշտ շէր կարում տանի, մի հարյուր էշ շոկ եմ առել. այսօր մի շուն իմ ուտելու կերակուրը կարողանում է շնճով փախցնել:

Այս խոսքերը որ լսում է ձիապանը, գլխի է ընկնում, որ սա պիտի թաքավորը լինի, ընկնում է նրա ոտները ու ներողութուն խնդրում, որ էսպես վատ վարվեց նրա հետ: Ծտ արեց նրա ոտների բխովները ու ասեց, որ նա այժմ աղատ է՝ ուր կամենա կարող է գնալ: Թաքավորը շնորհակալ եղավ ձիապանից ու դուրս եկավ գնաց: Գնաց, գնաց, շատ ու քիչը աստված գիտե, մի սարի գլխին կանգնեց, էստեղ լավ-լավ տներ տեսավ, ներս մտավ նրա դռնովը ու տեսավ, որ ներսը մի սիպտակ միրուքով ծերունի նստած է, ինչ որ գրում է փոքրիկ թղթերի վրա ու իրա դեմ եղած ծովն է գցում: Նա այստեղ անխոս մնաց. երկնքից կերակուր վեր էկավ ու նրա առաջը դրվեց, նա մի քանի թիքա կերավ ու մնացածը նրան առաջարկեց: Նա էլ կերավ. էսպես նա էս ծերունու մոտ իրեք օր մնաց, միայն շէր վստահանում հարցնել, թե այդ ի՞նչ է գրում: Միայն վրա շորորդ օրը հարցրեց, որ այդ ի՞նչ է գրում: Նա ասաց, որ ինքը մարգիս բախտն է գրում ու գցում ծովը:

Թաքավորը միայն մի աղջիկ ունեի, որին դեռ շէր պսակել, էլ ոչինչ չունեի: Նա իր աղջկա բախտը հարցրեց. նա ասաց, որ նրա աղջիկը պիտի պսակվի իրանց քաղաքի հարուստի քոճից եղած տղի հետ: Այս լուրը ցավ պատճառեց թաքավորի սրտին, թե ոնց իրա սիրուն աղջիկը մի հասարակ քոճի հարս պիտի ըլնի: Թաքավորը էս ծերունու մոտից ուղղակի վեր է կենում ու իր երկիրը գնում, իր ժողովուրդը առաջ ընենց էին իմանում, թե իրանց թաքավորը սպանվել է, երբ սաղ տեսան, անշափ ուրախացան:

Թաքավորը մի քանի օրից հետո գնաց էն հարուստ մարգի մոտ ղոնաղ. էս մարդը պսակված շէր: Թաքավորի գալուստը վրա շատ է ուրախանում այս հարուստը ու լավ-լավ փեշքեշներ է հազրում թաքավորի հմար, որ գնալիս նրան տա, բայց նա ոչինչ չվեր կալավ, ասելով, որ իրա քոճը փեշքաշ անի, էդ էլ հերիք է: Նա իր քոճին տվեց թաքավորին: Թաքավորը վեր կալավ ու տարավ, ճանապարհին տվեց իր ծառաներին, ասելով որ տանեն հեռու տեղ, նրան սպանեն, նրա փորում երեխա կա՝ նրան էլ սպանեն: Թաքավորի ծառաները կատարեցին նրա հրամանը: Տարան հեռու տեղ,

սպանեցին նրան, տեսան փորում մի շատ սիրուն երեխա, մեղք-
ները կալով, որ սպանեն ու էնպես թողին էնտեղ ու իրանք գնացին
ասեցին թաքավորին, որ սպանեցին: Թաքավորը արխին եղավ,
որ իր աղջիկը այժմ էն քոճի հարս չի դառնա: Համա աստված էս
որրին շնորհեց: Էն հարուստ մարդը շատ ոչխարներ ուներ, որ մի
չորանի էր տվել պահելու: Այս շոբանը մի օր էլ իր էծն ու ոչխարը
առած հանդ դուրս եկավ: Սրա էծերից մինը ծածուկ ամեն օր գնում
էր էն ևրևին ծիծ տալիս և էլի դնում: Այս բանը նկատեց մի օր
չորանը ու հետևեց էծին, տեսավ, որ գնաց մի երեխի ծիծ տվեց:
Նրա ուրախությանը չափ չկար, երբ տեսավ այս սիրուն երեխին,
որովհետև ինքն էլ երեխա չունեի: Նա վեր կալավ, ջորի մեջ փա-
թաթեց ու տարավ իր խաղերին տվեց, նա էլ շատ ուրախացավ
ու վեր կալավ իրան տղա:

Էս ևրևին մենձադավ՝ մի շատ խելոք, համեստ տղա դուրս
եկավ: Էս բանը թաքավորի ականջը ընկավ: Նա կանչեց իր նոթաբ-
ներին ու հարցրեց, որ ճշմարիտն ասեն իր տված կնկանը սպա-
նեցի՞ն, թե՞ ոչ, ապա թե ոչ՝ նրանց կսպանի. իսկ եթե ճշմարիտը
խոստովանեցին՝ կների նոցա:

Նոթարները պատմեցին գործի եղելությունը: Թաքավորը էլի էն
հարուստի մոտ զոնաղ գնաց, նրա համար թանկ ընծաներ հագրե-
ցին, բայց նա ոչինչ չուզեց, ասեց, որ տղեն թող մի երկու շաբաթ
իր տանը ըլնի. հարուստը համաձայնվեց, տվեց նրան իր որդեգրած
երևին: Նա վեր կալավ նրան, ճանապարհ ընկավ դեպի իրանց
երկիրը: Ծանապարհի կեսին թաքավորը ասեց էն տղին, տալով մի
նամակ, որ տանի առաջ-առաջ իրենց տունը, իսկ ինքը դալիս է:
Էս նամակը իր փեշատով էլ փեշատեց, իսկ այդ նամակի մեջ
գրած էր. «Այս նամակագրիս իսկույն վառած քուրի մեջ գցեցեք»:

Տղեն տարավ թաքավորի տունը: Ծանապարհից դադրած լինե-
լով թաքավորի բաղնում պռկեց, որ մի քիչ հանգստանա ու
քունը տարավ: Նամակը գդակի մեջ էր դրած ու կողքին վեր գցած:
Թաքավորի աղջիկը երեկոյան դուրս եկավ բաղնում ման գալու ու
ղարմացավ, երբ մի մարդ տեսավ պռկած իրանց բախշումը:
Մոտեցավ նրան, նկատեց նամակը, վեր առավ ու փեշատից ճանա-
չեց, որ իր հորն ա, բաց արեց ու կարդաց: Այդ նամակը ճղեց ու
մի ուրիշը գրեց ու դրեց նրա փափախի մեջ ու ինքը հեռացավ: Այս
նամակի մեջ այս էր գրած. «Այս նամակագրիս իսկույն պսակել
լիմ աղջկա վրա»:

Թաքավորի մարդիկը, երբ այս նամակը ստացան, շատ զարմացան, որովհետև պատվեր էր տվել քուրեն վառած պահեն ու երբ մի նամակաբեր կուղարկի, գցեն նրա մեջ՝ այրեն: Բայց Թաքավորի հրամանն էր, ինչ կարող էին անել, պիտի իսկույն կատարեին. նրան պիտի պսակեին Թաքավորի աղջկա վրա: Թաքավորը մի Ռաշտ ունեեր, սա էնպիսի կատաղած ձի էր, որ մինչև էդօր մարդ չէր կարողացել նստի նրա վրա: Էս տղեն ինքը գնաց գոմից դուրս քաշեց և զոռով նստեց նրա վերա ու Թաքավորի առաջը գնաց:

Թաքավորը էս որ տեսավ, մնաց զարմացած ու ինքը իրան ասեց. «Ճշմարիտ, որ մարգիս ճակատին ինչ գրած է, էնպես էլ կըլնի»:

Թաքավորը իսկույն վեր եկավ իր ձիուց, նորա ճակատը պաշեց ու ասեց.— Դու իմ փեսան ես:

Էսպեսով նրանք մարդ ու կնիկ էղան ու երջանիկ ապրեցին: Չարը էնտեղ, բարին էստեղ:

